

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՆՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտուն 10—2 ժամ (յաջի կիրակի եւ տօն օրերին).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, փետրվարի 23-ին, Վանքի մայր եկեղեցում ս. պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ

## ԱԼԷՔՍԱՆԴՐ ԵՐԻՅԵԱՆԻ

մահվան տարեգարծի առթիվ, որի մասին հանդուցեալի յիշատակը յարգողներին տեղեկացնում է հանդուցեալի ընտանիքը:

1—1

### ԲՈՎԱՆԴԱՅԻՆՔԻՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ. ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. — ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. ՀԵՐԱՅԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Ամստեղծութիւն:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՅԻՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Բարեկենդանի օրերին, անցեալ շաբաթ, երբ ամենքը աշխատում էին որքան կարելի է շոշափելի, այն ծակող փաստերով ապացուցանել թէ բարեկենդանը իսկ որ նշանակում է փոքրիկ կենդանութիւն, իմ առջեւ դրված էր մի թուղթ. Հասարակ թղթի մի թերթ էր դա, պաշտօնական վաւերականութեան բոլոր պարագաներով. արժեքական կնիք, թանաթ մար, ստորագրութիւններ նա խօսում էր աշխարհի յաւիտեանական անարդարութիւններից մէկի մասին: Եւ ես ուզում էի նրա բովանդակութիւնը զեկուցանել հասարակութեան:

Բայց չըջապատող ցոյց էր տալիս, որ այդպիսի թղթերին մասին խօսելու ժամանակ չէ: Ոսել կարելի է, բայց ոչ պիտի լինի լսողը: Ո՛վ պիտի թողնէ փոքրիկ կենդանութեան անաղքի գործը և գայ ականջ դնել ինչ որ անարդարութեան, ինչ որ զրկանքի մասին խօսող ձայնին:

Ոսել, այո, կարելի էր: Բայց ինչ ձայն պի-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՍԻՍԵՆՏԸ

Մակի ապէրը մեռաւ ութսունհինգամեայ հասակում, մեռաւ իր մուրադին չը հասած: Նրա մուրադն էր հարիւր տարին լրացնել, տեսնել իր ծուռներին ու հուռներին ու յետոյ միայն թողնել անցաւոր աշխարհը: Մեռաւ Մակի ապէրը ամբողջ երկու շաբաթ ծանր հիւանդութեան ճանկերում տանջվելուց յետոյ, սաստիկ փորագաւից, բոլոր ժամանակ լվայ փորս, վայ փորս էր աղաղակում նա ու մի ճար, մի օգնութիւն ու թեթեւութիւն աղերսում չըջապատողներից, բայց իզուր. դործ դործ ճարը նրա հիւանդութիւնը աւելի սաստկացրեց, և անտանելի ցաւերից մեռաւ, ազատվեց նա ընդմիջ ընդմիջ ցաւերով հարուստ անցաւոր աշխարհից...

Մակի ապօր հիւանդութեան երկրորդ օրը բոլորովին անսպասելի կերպով գիւղում մի բժիշկ պատանեց, որն իր իշխանութեան հրաւիրմամբ եկել էր վեց ամիս առաջ պատանած ինչ որ սպանութեան զոհի մասին արձանատւ գրութիւն կազմելու, սպանվածի զիպը գետնից հանելու, անդամահատելու ու տեսնելու: Վարդանը, Մակի ապօր մեծ որդին, գնաց բժիշկին մօտ խնդրելու, որ գայ հիւանդին մօտիկ անի. բժիշկը, չեկաւ, ու չը դարձրեց բնաւ Վարդանի աղաչանքին:

Գիշի Ակուբը, տեսնելով, որ Վարդանը բնաւ չէ հեռանում դռան չէմբից, յայտնեց այդ մասին բժիշկին: Վերջինս պատուիրեց, որ հիւանդին բուժիժն ուղարկեն ու թէյի հետ զագրանիքի կանեակ խմացնեն:

Ինչէր, որ կանգնեցնէր մարդկանց, մտածել ու զգալ տար: Քսան և չորս ժամ էլ բաւական էր մարդկանց, ժամանակը թուում էր, բարեկենդանի օրերը արագ հալվում, չքանում էին, իսկ դեռ որքան բաներ կային մեր ուրախասէր աշխարհում, որոնց կը կամենար ճաշակել փոքր կենդանութեան պաշտամունքը: Այդ փոր առածը ճաշում, տրաքում էր և սակայն նրա տէրերը քիչ էին համարում այդ նրանք հետքով վաղվադէպ էին այս ու այն կողմ: Ուտելը բաւական չէ, պէտք է և զուարճանալ: Խնձորներ, երկկոթներ, ցերեկոթներ, հարսանիք, դիմակահանդէս, կաֆէ-շանտան, — ո՛ր մէկը թողնէ փոքր կենդանութիւնը: Թատրոններն էլ հօ էլ ոչինչ չէին խնայում գրաւելու, իրանց վերջին օրերը որքան կարելի է շահաւէտ դարձնելու համար: Եւ կենսի լայնարձակ խնձորը այնպիսի չլինեցող ժողով էր բարձրացրել, որ զուարճութիւնների, կեր ու խումի մէջ տապալկով մարդկանց պէտք էր խղճալ իբրեւ նախատեսների, պէտք էր կարողութիւն, ոյժ մտղմել և ոչ թէ հարցեր առաջարկել, միտք զբաղեցնել: Ի՞նչ հարցեր, ի՞նչ մտքի ժամանակ, երբ աշխարհից հեռացած, միշտ լուրջ ու սուրբ, խստակրօն և կուսակրօն հողերակալութեան համար անգամ այդ օրերը կատարեալ ազատութիւն է, աբեղայա թո՛ղ է, այնինքն սանձարձակութիւն...

Ես ստիպված եղայ թաղանթ իմ առջեւ դրած թուղթը:

Եւ անա տնցան փոքր կենդանութեան խնթ:

Բժիշկը դարձրեց նրանից երեսը առեւոյժ, աղէ, գնաց: Գիշի դուրս գնաց: Նա ոչինչ չը հասկացաւ բժիշկի խորհրդից՝ բուժիժն, թէյ, կանեակ ու զագրանիքի բաները թէ՛ն նա էլ լսած էր այդ բժիշկից, բայց ոչ մի հասկացողութիւն չուներ նրանց մասին: Խնդրել նրան բացատրել, պարզ ասել, չը համարձակվեց, վախեցաւ: Ծարը կտրած Ակուբին այդ անգամ էլ, ինչպէս նա արել էր ուրիշ շատ այդպիսի դէպքերում, իրանից հնարեց այն, ինչ որ Վարդանը արտատրով սպասում էր բժիշկից, որը նրան այդ բոլորին մի սքանչելագործ սուրբ էր թուում ու այդ պատճառով շատ զօրաւոր, ահարկու ու անհոյ:

Բազմափորձ գիշիքը իր մօքում բուժիժնը թարգմանեց լոբի ու վիլուկ, թէյը փիփերթ, կանեակը քացախ, իսկ զագրանիքին ռիտոր, նա համոզված էր, որ այդ կերակուրները, եթէ ռիտորով ու քացախով լաւ համեմած լինեն, Մակի ապօրը եթէ չը լաւացնեն, յամենայն դէպս չեն էլ մեռնի, քանի որ իր կեանքը նա վիլուկ ու փիփերթ քաղելով ու չորացնելով է անցկացրել: Նրանք նրա ամենասիրելի կերակուրներն են:

Անստեղծութիւն գիշիքը առանց մի բոլոր խղճահարկելու դիմեց արտասուտաւոր աչքերով նրանից իր զառանգաւ ապօր համար փրկութիւն հայցող Վարդանին ու առաջ՝ Վարդան, զօխտուրն առաւ՝ ա՛ թո՛ղ մի լաւ լոբի ուտի Մակի ապէրը, նրա գլխին էլ մի աման լաւ վիլուկ կամ փիփերթ հետը մի բոլ քացախ ու սիտոր խառնած. իրիկու-առաւօտ էլ մի-մի թաւ ուրան գլխու թուղթ քացախ խմիք...

Վարդանը ուրախ-ուրախ վաղեց տուն. որովհետեւ զօխտուրն նշանակած զեղերը չաւառում էին նրանց տանը, նա հաւատացած էր, որ իր ապէրը կը փրկվի անշուշտ, որ տան զբեթուկը մի քանի տարի էլ կապրի դեռ, գուցէ իր մուրադին հասնի, հարիւր տարին

ու խելաւ օրերը: Տեսարանը փոխվեց դիւթաւան գաւազանի մի հարուածով: Մեծ պատ էր Ապաշխարութեան, ձէթի օրերը Այժմ զուարճանէր քաղաքի մէջ բարձրանում է եկեղեցիների զանգահարութիւնը, որ օրը երեք անգամ ինչեցնում է մարդկանց, թէ դժոխք կայ, թէ դառնաւ տան է լինելու ստուերների աշխարհում: Իւրաքանչիւր մարդ, ասում է պղինձի զօղանջները, հաշնգիրը ունի երկնքում. այնուտեղ արձանագրվում են մարդկային գործերը, այնտեղ կշռվում, չափվում են մեղքերը, եւ դժոխքը աւելի և աւելի արժարծում է իր բոցերը, սատանաները, դեներ դաս-դաս կանգնած, զօրախմբեր կազմած պարում են ուրախութիւնից, որովհետեւ երկնքի հաշիւները ցոյց են տալիս, թէ մարդկային հոգիների ինչ անաղքին խմբեր պիտի ընկնեն կպրէ կարասներ, անշուշտ կրակների մէջ, քանիսնեքը պիտի կանգնեն այն մաղերի վրա, որոնք կա-մուրջների պէս ձգված են սե, եռացող գետերի վրա...

Ու խեղճ մարդը պատի, ձէթի այս օրերում մի առանձին ուշադրութեամբ է նայում միանման, բարձրահինչ զանգահարութեան և հասկանում է, որ ինքը մեղաւոր է, շատ մեղաւոր: Տարվայ մէջ այս եօթը շաբաթն են տուել այդպէս մտածելու, երկնքի ու դժոխքի բաները ըմբռնելու, իր ծովացած մեղքերի ճարը տեսնելու համար:

Եւ ինչէր չէ անում խեղճը՝ իր հոգին փրկելու համար: Տեսէ՛ք շուկաներում խանութները լցված են կանաչեղէնով. զանձիլը, սպանախը կոյտեր են կազմում, լոբու, սիսեռի, բակլայի, քնուկի, իսկ խաչի քանկները պատկառելի են, վեհութիւն են ցոյց տալիս. անաղքին տակառներ՝ լիքը թթու դրած կաղամբով, վարունջով, ջնջվող իր գնի բարձրութեան վրա է: Այդ բոլորը մտնում է մարդկանց փորը, այդ բոլորը սպանում է հոգու փրկութեան համար: Ուտում են մարդիկ ոչ թէ իրանց համարի համար, այլ սատանաների, դեւերի անհամար բաղնիքների դէմ կուլուելու համար: Փաստը, բարեպաշտութեան, արդարութեան,

լրացնի, ու Աստուած էլ այդ զբեթութիւնն աղօթքների շնորհով նրա օջաղի ընդհալը, խեղ-բարեքաթը՝ անպակաս կը պահի. տունը առանց զբեթութիւն, առանց մեծի, առանց նանի կամ ապօր չէ որ տուն չի...

Բժիշկի, աւելի հեշտ կը լինի ասել, նրա աստեղծութիւն գիշիքը Ակուբի պատուէրը կատարել սկսեցին ամենայն ճշտութեամբ, բարեխղճութեամբ ու խորին հաւատով դէպի բժիշկ անստեղծութիւնը: Խեղճ Մակի ապէրը մեծ դժուարութեամբ ու տանջանքով մի կերպ ծամում, ծամծմում էր լոբին ու վիլուկը, իբրեւ բուժիժն, խմում քացախը, իբրեւ կոնեակ, ու աւելի և աւելի բարձրաձայն լվայ փորս, վայ փորս ու լվայ մեռաց աղաղակում, գոռում ու զղբացնում տունը: Նրա որդիքը, աղիլիներն ու հարսները բոլոր ժամանակ նրա չորս կողմը կտրած համարեալ ոյժով նրա կողմը կընեն կոնեակ քացախով ու սիտորով համեմած վիլուկն ու փիփերթը, կրկնելով անաղքաւ:

—Ապէր, կեր. կեր, քեզ մատաղ, ապէր, վախի մի, զօխտուրն ա սսել, քեզ վաւա չի տալ, լաւ էլ դառնաւ անպատճառ. մի էս թիքէն էլ, էս թիքէն էլ կուլ տուր. էդ էս էդէնց, լաւ կուլ տուր, քեզ մատաղ, ապէր, Դէ դրա վրա էս քացախից մի քիչ խմի, մի քիչ, մի-երկու կուլ միայն. էդէնց, վախի մի, ապէր, քեզ մատաղ, փորից ցաւին մօտիկ մի տալ. զօխտուրն սսել ա, որ քացախը նը-րան թրի պէս կը կտրի, թրի պէս. ջանիլու-թիւնը միտք գցի ու խմի արխային:

—Քաշեցէ՛ք, կորցրէ՛ք էդ զահրիմարը, — ասում էր խեղճ Մակի ապէրը, հեռացնելով իրանից ձեռքի հրուսով քացախի թաւը, — բա մի լաւ բան չի կայ տաք խնձ, հէնց էդ անտէր փիփերթը, լոբին, վայ փորս, վայ, վիլուկը, սիտորն ու քացախն են. կեանքս դը-րանք են մաշել, վայ փորս, հիմի էլ հիւանդ

թեան փաստը, ակներե է, ցոյց դրված ամբողջ աշխարհի առջեւ: Ամեն օր նայեցէ՛ք խանութներին. եթէ այստեղ անշաթ են մնում հոգիներ փրկող կանաչեղէնի, թթուեղէնի և հոնդեղէնի պաշարները, թէ նրանք գնողներ չունեն, դուք կարող էք համարձակ եզրակացնել, որ մարդիկ թաղված են մեղքերի և ապականութեան մէջ, որ նրանք չեն ուղում մաքրվել, իրանց հոգու խաւարը փարատել և լոյսի ժառանգներ գրվել:

Մի շաբաթ է անցել մեծ պատից: Այս շաբաթվայ մէջ ես ամեն օր նայում էի խանութներին և տեսնում էի, որ մարդկութիւնը, փառք Աստուծու, խրված չէ դժոխքի կեղտերի մէջ: Առնում են եռանդով, տանում ուտում են հոգու փրկութիւն և երանական կեանք պատրաստող ջնջվող էլ, ձիթապտուղն էլ, մանաւանդ լոբին, լոբին: Այո, որքան անձնազոհ են մարդիկ, որքան պատրաստակամութիւն ունեն՝ «լուացարուք, սրբեպարուք» պատուէրը ճշգրտութեամբ կատարելու համար:

Ձէ կարելի առանց հպարտութեան չը նայել այս արտառուչ տեսարանին: Ամենքս երազում ենք տեսնել արդարութիւն որոնող, ինքն իր յանցանքները խոտտովանող և փրկութեան համար ոչինչ չը խնայող մի մարդկութիւն, — այնպէս չէ. եւ անա կայ այդ մարդկութիւնը: Ձէթը տակառներով է ոչնչացնվում, քացախն ու պղպեղը այրում են մարդկանց ներսը: Էլ ինչ է հարկաւոր: Ուրախանալ, միայն ուրախանալ:

Եւ անա այս լաւ, բարի, առաքինի կերպարանք ստացած մարդկութիւնը ինձ ասում է, թէ այժմ ժամանակ է, որ իմ վերոյիշեալ թուղթը դուրս բերեմ:

Բայց իմ ընթերցողը, երևի, արդէն չափազանց լարել է իր ուշադրութիւնը, երևի կարծում է արդէն, որ իմ թուղթը մի անեղ, սասանեցուցիչ բան է պարունակում իր մէջ: Ի՞նչ է նա ասում, ինչ անաւոր դէպք է պատուում: Մի շտապէ՛ք, ընթերցող: Մի՛ սոսանաք, որ մոխրադոյն է մեր կեանքը, որ մեք պարում ենք փոքրիկ փաստերի մէջ, որ այն, ինչ ասել են տալիս այդ փաստերը, հարիւր անգամ

տեղս էլ, վայ մեռայ, պէտք ա էդ ուտեմ. բա ձեզ Աստուած չունէ՛ք. վայ վայ, վայ փորս:

—Ապէր, անր զօխտուրն ա սսել, զօխտուրը. նա ա հրաման արել. մեք մեր գլխու ճնցքեղ քացախ, վիլուկ ու սիտոր կը տանք. էդ հօ կերակուր չի քեզ համար, ճար ա ճար. կեր, խմի արտալի, որ լաւ դառնաւ, — ասում են չըջապատողները:

—Թէ դրանցով պէտք ա լաւ դառնամ, ոչ լաւ դառնամ, փուչ լաւ դառնամ, — ասում էր խեղճ Մակի ապէրը ու շարունակում անվերջ լվայ փորս ու լվայ մեռաց գոռալ:

—Ծարը, դեղը, միշտ էդէնց կը լինի, ապէր, — ասում էին նրան, — միտք կեռիք կալ, մի լաւ համիդ ու քաղցր խորակ միտք գցի ու սխտորով փիփերթը կեր, որ հրետին լաւանաս:

Մակի ապէրը, խելով վերջին խելացի խորհուրդը, զոտ տալով երակալութեան ու միտք գցելով հարսանքաների համեղ իրաւի կորուկոտն ու խորովածախաչուն, մաքրում զօխտուրն՝ մեռել-կենդանը քաշելով ու նրա եւ կած-գնացած ճամբան անիծելով, ուտում էր նրա աստեղծութիւն գիշիքը կապած յայտնեց դործ դրած միջոցների օգտաւէտութեան մասին, ասելով Վարդանին:

—Արա, Վարդան, ասում ես՝ զօխտուրն ա սսել ա էս մեր տուած խորակներն ուտի ու քացախն էլ նրանց վրա խմի էլի. եանի էս գլխամեռ Ակուբը քեզ դրուստն ամեն բան էլ ասեց:

—Բա ինչ արաւ. իմ աչքի առաջին գնաց

կրկնված խոսքեր են: Կրկնված, այո: Եւ ես մի անգամ էլ չէի կրկնի նրանց, եթէ մինչեւ այսօր եղած անթիւ կրկնութիւնները գէթ մազի չափ փոխած լինէին իրողութիւնը:

Մի հետաքրքիր խեղճ բան է իմ ձեռքի թուղթը: Դա աղքատութեան մի վկայական է, որ տուել է թիֆլիսի ոստիկանապետը Խնչ է պատմում այդ թուղթը:

Անցեալ տարի թիֆլիսում վախճանվեց Ներսիսեան դպրոցի վերակացու և ուսուցիչ Դաւիթ Տէր-Դաւթեանը: Իսկ այսօր նրա ընտանիքը արդէն այն դրութեան մէջ է, որ դիմում է ոստիկանութեան՝ աղքատութեան վկայական ստանալու համար: Եւ ոստիկանապետը վկայում է:

Հանգուցեալի այրին 25 տարեկան է, ունի երեք երեխաներ—մէկը 6 տարեկան, միւսը 5 և երրորդը՝ 2 տարեկան: Երեք երեխաներն էլ մօր խնամքով են պահվում: Իսկ մայրը ինչ միջոցներ ունի:

Բացի տնային ամենամանրամասն իրերից, ոչինչ կաջ չէ մնացել: Մինչև այժմ որը ընտանիքը ապրում էր այն փողոցում, որնք գոյացել են ուսուցչի մահվանից յետոյ մնացած իրերի վաճառումից:

Ձր կարծէք թէ պաշտօնական այս խօսքերը պէտք է փոքր ի շատ լայն մտքով հասկանալ: Մնացած իրեր... Խնչ կարող էր թողնել մի խեղճ նայ վարժապետ: Ես տեսել եմ այն հետաքրքրեալ մի մասը, որ խեղճը թողել է իր որբիկներին իբրև ժառանգութիւն: Փողոցում գրեթէ մի փողոցիկ կապոց էր վաճառվում: մօտեցայ, տեսայ դէսից-դէնից հաւաքած մանկական գրքեր, ամսագրեր, մի քանի հատ ընթերցանութեան գրքեր, մի քանի հատ էլ դասագրքեր: Նայելով այդ կապոցին, ոչ ոք չէր կարող երևակայել անգամ թէ դա ժառանգութիւն է: Թողած երեք փողոցիկ, անմեղ երեխաների համար: Տան անկիւններում հաւաքված աւելորդութիւն, անպէտք բաներ—այս ես հասկանում եմ: Բայց որբերի ժառանգութիւն, այնպիսի մի հարստութիւն, որով պիտի ապրեն երեք փողոցիկներ—ո, դա մի դառն, սոսկալի հեղուկութիւն էր, որ միայն աղքատութիւնը կարող է լոյս աշխարհ հանել, հրապարակում դնել:

Իրողութիւնների կան, սակայն, որոնք հասկանալի են դարձնում աղքատութեան այս հեղուկութիւնները: Ոստիկանական վկայականը չարժանաւոր է նկարագրել նայ ուսուցչի ընտանիքը: Նա ասում է, թէ այդ ընտանիքը ապրում է մի բնակարանում, որի համար վարձ տալիս է երեք ռուբլի: Եւ ինչպէս չէք ասի, որ այդպիսի ընտանիքի համար ճիշդ որ ժառանգութիւն, հարստութիւն են համարվում: Ինչ, քրքրված մանկական գրքերն անգամ, որոնց գինը գրոշներից բարձրանալ էր, երբեք չէ կարող:

Դոխտուրին ինչ հարկաւոր էր, ասեց. նրա ասածն էլ եկաւ ինձ ասեց: Հիմի թէ ինձ հաստատում չես, կանչի Ակուփին ու մի լաւ հարց ու փորձ արա. թո ակնհայտ լսի դոխտուրի ասածները:

Տնեցիները ընդհանուր համաձայնութեամբ որոշեցին կանչել Ակուփին ու մի երեխայ ուղարկեցին նրա ետեւից: Գլխից, հարցնելով՝ «արա, տանը դիմի-արաղ կայ» ու դրական պատասխան ստանալով, իսկույն և եթ ճանապարհով Մակի ապօրեկց տունը: Ներսիսեանը պէտք, այդ դէպքում ոչ թէ հասարակ լաւատեսութիւն, այլ կատարեալ բժշկի դեր կատարող, գլխից դիմեց հիւանդին մի քանի խրախուսական խօսքերով:

—Հը, Մակի ապօր, ինչ ես, ինչ. ինչ ես տեղի տալը մտել: Վախի մի, լաւ ես, լաւ: Կանոն արա վեր կաց. էնքան ժամահացեր, քնիկները ասանց քնի անցնում գնում են, և աղքատութիւնը:

—Է՛, քնի մատաղ Ակուփ, չուտով իմ ժամահացն էլ էք ուտելու: մեռնում եմ, մեռնում: ինձ թափի, ինձ մի ճար արա, քնի մատաղ. ասում եմ խեղճ բան և կտրում,—ասաց հետևի Մակի ապօրը:

—Վախի մի, մեռնիլ չես. դեռ քո ժամահացն ուտելու վախտը չի. ուրիշների ժամահացերում իբրեւ հետ չատ պտեղը գինի-արաղ խմիլ: Աղջի, Մայան հարա,—դարձաւ գլխից հարսններից մինին,—էդ ինչ բանի ես. ինչ ես էդտեղ տաւարի պէս կանգնել, և քո հէրը չան տեղը հալի. մի արաղ բեր ես ու Մակի ապօրը իբրեւ կենաց խմեց. դէ կանոն արա, չուտ, մեծաւորի կշտին էդէնց դուրսը կը գան, չան աղջիկ. պէտք և դուռի պէս դէս ու դէն թռչկոտաւ, երբ ձեր տանը մեծաւոր ես տեսնում:

Գլխի Ակուփը գիւղական ժողովրդի ստորին

Երեք ռուբլի բնակարանի վարձ: Ով ճանաչում է թիֆլիսը, նա կիմանայ, որ երեք ռուբլով մի հաւաքոյն անգամ հեշտ չի լինի վարձել թիֆլիսում: Եւ այդտեղ, այդպիսի մի գին ունեցող բնակարանում, պիտի ապրէ չորս հոգուց բաղկացած մի ընտանիք: Հարկաւոր է էլի մի բան աւելացնել, հարկաւոր է երևակայութեան դիմել, հարկաւոր է նկարել, բացատրել...

Մի մոռանալ, որ այդպիսի դրութիւն ստեղծել է մի հայ ուսուցչի մահը: Հայ ուսուցիչ... Դա այն դասակարգն է, որի երախտքները անհուն են. այն դասակարգը, որ մեր կենսաբան մի ամբողջ, այժմ, աւաղ, բաւական նուազած մի երեւոյթ է: Թող հայ վիպագրողը, բանաստեղծը փորձէ մի իդէալական պատկեր որդեկ կենքի մէջ նրան: Նկարագրելու, երգելու համար: Ձր կայ մի ուրիշ դասակարգ, ուր նա կարող է գտնել իր որոնածը, բացի ուսուցչական դասակարգից:

Եւ միշտ այդ իդէալական գործիչի հետ կապված է դժբաղդ իրողութիւնը—մի կոյտ որբեր, երեք ռուբլիանոց մի սենեակում հաւաքված, աչքները տնկած այն բանին, թէ իրանց հայրիկին հին գրքերը քանի կօպէկ կը տան մի կտոր հաց ուտելու համար: Ո՞րտեղից են այդ փղբերկները, ինչու են նրանք մնացել աշխարհի վրա:

Խեղճ ուսուցիչը իր ծանր, չարքաշ կենքի մէջ ներելի համարեց երազել այս աշխարհի երջանկութիւնը.—ընտանիքական յարկ, երեխաներ, որոնք պիտի քաղցրացնէին աշխատանքի օրը: Նա մեղք չը համարեց այդքան երջանկութիւն խել: աշխարհից: Ապագայի մասին այդ պահները չեն էլ մոռնում: Բաւական է որ ունեն աշխատելու կարողութիւն: Բայց անապատից այդ կարողութիւնը, կտրվեց կենքի թելը, և աշխարհի երեսին մնում են մի խումբ դժբախտներ:

Ես պատմեցի ձեզ իմ թղթի բովանդակութիւնը: Պատմեցի ոչ թէ բարեկենդանային իրարանցման մէջ, երբ դուք չափազանց զբաղված էք ձեր մարմնով, այլ պատի, ձէթի օրերում, երբ դուք չափազանց զբաղված էք ձեր հոգով:

Խնչ կանէք: Պատ, ապաշխարութիւն Միթէ այս օրերն են հարկաւոր, որպէս զի Ներսիսեան դպրոցի վարչութիւնը զգայ, թէ պարտաւոր է օգնութիւն հասցնել իր ուսուցչի որբիկներին: Կենսաթօշակներ տալիս է այդ վարչութիւնը, տալիս է դասամեքենան, անխորհրդներ: Ձր կայ գոնէ մի փողոցիկ օգնութիւն այն խեղճների համար, որոնք դեռ նոր են սկսում ապրել, նոր են աշխարհ մտնում և այնքան կարօտ են նեղուկներին:

Պատի, ձէթի օրեր, Միթէ արանք են հար-

խաւորում բացարձակապէս իրան մեծաւոր էր յայտարարում ու այդ կողմէն իր վրա հաստատ պահելու համար ամեն կերպ աշխատում էր չըրպատողներին նկատելի դարձնել իր ունեւրի վրա գտնվող կարծիքի մահուդի խուսափած կտորները, գլխից կանաւոր ուսուցչները:

Ինքնակող մեծաւորի պահանջն իսկոյն կատարվեց. արաղն սպարեց եկաւ: Մի բաժակ արաղ գլխի իր ձեռքն առաւ, միւսը հրամայեց մօտեցնել Մակի ապօրը: «Մակի ապօր,—ասաց նա խիստ բարձրաձայն.—Աստուած ջանա օտարութիւն տայ, Մակի ապօր. վաղի իդիթութիւնը միտք գցի. արաղը մի գլխից քաշի, խմի. ինչ ես գտիւղ դէս ու դէն անում: խմի, քնի ասում եմ: արաղը քնի օգուտ աւ էնքան իմ կենսաբան գեղը եկած դոխտուրներին դուրեղ եմ արել, որ ես էլ դոխտուր եմ դառնել: իմ խելքս էս օհաթին նրանցից պակաս չի բան կտրում: աչքերը հուսի կալ ու խմի թաւաղա:

—Վայ փորս, վայ փորս, կարում չեմ խմել, Ակուփ, քնի մատաղ, կարում, թաւաղ մեռնում եմ: դու խմի, քնի հալալ, ինձ բալի, իմ բաժինն էլ դու խմի,—արաղում էր զօրաւորութիւն մերձ ի մահ հիւանդը:

Բայց զօրաւորութիւն անողորմ էր:

—Արա, Վարդան. մտիկ մի տալ, զօրով խմեցրու արաղը: քաղցրով ու օրաւորով կերած փիփրթի վրա դա շատ լաւ կլինի.—ասաց հրամայական տօնով գլխից, պարպելով իր բաժակը:

Հիւանդին արաղը զօրով խմացրին, ու չը դարձնելով նրա զայն փորս, վայ փորս ու զայն մեռալ: աղաղակներին:

—Էդ լաւ և, վախի մի, շատ և լաւ: ցաւը շատ օգուտ և դառն. ցաւիլ պալի, որ հիւանդութիւնը դա ջանից դուրս գալ ու կորչի,—

կաւոր, որպէս զի հանգուցեալի ընկերներին և պաշտօնակիցներին յիշեցնէ իրանց պարտականութիւնը: Միթէ չը գիտեն նրանք, որ 2—6 տարեկան որբերը չեն կարող մեծանալ, մարդ դառնալ իրանց հօր թողած հարստութեան օգնութեամբ:

Իսկ դու, դանձիլի, յօրու քրիստոնէութիւն, դու ինչ կասես Տեռնում եմ քնի ամբողջովին փաթեցնելութիւն, ամբողջովին ձիթաթաթալ, ամբողջովին խոնկ ու մոմ, ճակատը եկեղեցու քարերին քանիս: Արքայութիւնը ինչ է, ջօնջօն, թէ որբի որբած արտասուք... Լ:

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՆ՝

Համայնարաններում և բարձրագոյն մասնագիտական դպրոցներում ուսանող երիտասարդներին նպաստող կովկասեան ընկերութիւնը ընթացքում բաժանել է որպէս նպաստ ուսանողներին և որպէս դասավճար ընդամենը 2,017 ռուբլի: Փետրվարի 20-ին տեղի ունեցած ժողովում երևաց, որ ընկերութեանը դիմողներից շատերի խնդիրներին անհնարին է բաւարարութիւն տալ միջոցների սպառման պատճառով:

Ներսէս Շահումեանի օգտին ստացանք Արախաթ Յովսէփեանից 10 ռուբլի:

Փետրվարի 27-ին նշանակված է թիֆլիսի քաղաքային վարչութեան և քաղաքային ուսումնարանական կոմիտէի միացեալ ժողովը կազմելու մի գանդատագիր կառավարիչ սենատի անունով թիֆլիսի նահանգական ատեանի վճիռ դէմ, որով ուսումնարանական կոմիտէն համարվում է լուծված և դադարեցրած իր գործունէութիւնը:

«Торек. Вѣд.» լրագիրը լսել է, որ կովկասեան հանգանակի ջրերի վարչութիւնը պայմանագիր է կապել Արաքսի, «Сѣв. Кургоръ» լրագրի նախկին խմբագրի հետ՝ տեղեկանք մի լրագիր հրատարակելու վերաբերութեամբ: Մշտագրութիւն կայ հրաւերել այդ լրագրին մասնակցելու մի քանի ուսն նշանաւոր վիպագրողներին: Լրագիրը պէտք է հրատարակվի ամեն օր, և ոչ միայն ամառները, այլ ամբողջ տարվայ ընթացքում:

Երկրագործութեան միսիստութիւնը որոշել է տաղիկայ ամառային սեզօնի համար բարւոքել կովկասեան հանգանակի ջրերի գրութիւնը: Արաքսահանգեան կուրորտներին և այն կատարելագործութիւնների հետ ծանօթանալու համար, որոնք մոզորած են այնտեղ վերջին

ասում էր հարցական հայեացքներով նրան մի տիկ տուող անեցիներին գլխից, պարպելով իրար ետեւից նախ մի-երկու արաղի, յետոյ գինու անկերթ թաւերը, նախաձայնելով թթու դրած կաղամբով ու չուշանով:

Հիւանդը անտանելի ցաւերից, որոնք սաստկացան արաղից յետոյ, զարկում էր անկողնում ու բոլոր ոյժով զայն փորս: ու զայն մեռալ գտնում:

—Էդ և հա, լաւ ես դառնում, Մակի ապօր. թո կենացը, Աստուած օղաղ հաստատ պահի,—ասում էր գլխից, խմում գինին ու խրախուսում այդպիսով ինքզ Մակի ապօրը.—ոնց օձը իր բնից դուրս և գալիս, ցան էլ էն և էն: հէնց թո փորից, քնանից և դուրս գալիս: վախի մի, թո կենացը. Աստուած թոռներդ պահի. բարով էնքան ապրես, որ նրանց ուրախութիւնը տեսնաս: Աղջի, Մայան հարա, չան ծիծ ծծած, տեսնում չես, որ առաջին կարգի միջոցն էլ գինի չը կայ: ինչեւ աչքերդ պլչած կանգնել. գնա գինի բեր:

Մայան հարա չուպով գնաց գինի բերաւ: Գլխից շարունակեց խմել ու քաղաքներ, խրախուսել Մակի ապօրը: Վերջինս մի քանի անգամ իրար ետեւից ուժգին ործակցում էր փսիսեց, զայն, ձեզ մատաղ, փորս ու աղիքներս քնի և մնում թա բերանովս դուրս գան, մեռնում եմ, մեռնում,—ասաց նա:

—Էդ և էդ, հէնց սիրտը թափիլ պտես, որ լաւ դառնաս: Մակի ապօր, վախի մի, էդ լաւութեան նշան և, լաւ ես դառնում էս և. թո կենացը, սաղ ըլէք ուրախ, Ասագ, Վարդան, աչքերիդ լիս: Մակի ապօրն էն և հա դէպի լաւն և գնում,—ասաց գլխից, պարպելով ձեռքի թաւը:

«Ասիտանտ» գլխին լաւ խմեցնելուց ու ուսուցնելուց յետոյ, Ասագը վերջապէս դիմեց նրան ասելով:

տարիների ընթացքում, միսիստութիւնը ուղարկում է արտասահման կովկասեան հանգանակի ջրերի գլխաւոր վերատեսուչ Պօլյանսկուին: Անկախ այդ բանից, միսիստութիւնը արդէն ձեռնամուխ է եղել շինելու Պօլյանսկուի գիտի վրա մի. անագին էլէկտրօ-հիդրօտեղապելութիւն, քանի կայարան, որի կառուցման ժամանակ գործ կը դրվին տեխնիկայի և բժշկականութեան ամենամարգոյն կատարելագործութիւնները: Սրա հետ միասին վերջանում է մի հակալական հիւրանոցի շինութիւն եկեղեցի-անդերի համար, որ իր մէջ պէտք է պարունակէ 500 սենեակ նորագոյն յարմարութեաներով: Հիւրանոցում գլխաւոր ուղադրութիւնը դարձած կը լինի ճաշարանի և ևւտեղիքի վրա, որոնք պէտք է գտնվեն բժիշկների առանձին հակոցութեան տակ: Ծնորհիւ նոր հիւրանոցի խաչնուկում վերացված կը լինի նրա ամենամեծ անյարմարութիւնը—էմանացին և յարմարաւոր բնակարանների բացակայութիւնը: Բացի նրանից ջրերի վարչութիւնը կառուցում է նոր թատրոններ խաչնուկիում, Ժեռեղեօ-վօսկում և Պիտերգօրսկում, տնկում է նոր այգիներ, կազմում է զուարճութիւնների նոր ծրագիր:

ՆՈՐ-ԲԱՅԱՆՔԻՏԻՆԸ մեզ գրում են. «Մի խումբ ծառայողների նախաձեռնութեամբ կաշաքաւ փետրվարի 15-ին ուսուցչին և հայերէն լեզուով ներկայացրում իրագրին «ЗООЛОГА РЪДКА» և «Էրոթ-կրոթ» պիեսները: Ներկայացումը սպասածից աղօղ անցաւ: Այն էլ նկատուել է, որ Նոր-Բայազետի համար իր ստեղծի նորութիւն էր «չինօմիկներին» բեմի վրա տեսնելը: Այդ հանգամանքը հետաքրքրել էր շատերին, ուստի դաշիճը, կարելի է ասել, որ լի էր հանդիսականներով: Բեմին էլ այն էր, որ սիրողների թւում գտնվում էր քաղաքագլուխ պ. Արծրունին: Նա խաղում էր, «Էրոթ-կրոթին» մէջ Իւանի դերը և, պէտք է խոստովանված, խիստ հմուտ կերպով կատարեց: Միւս սիրողներն էլ լաւ էին: Տոմասկներից եղել է մուտք օրտ 95 ռ., ծախս 30 ռ. արդիւնքը յատկացնվելու է քաղաքային դպրոցի օգտին»:

ԿԱՄՍԻՆԸ մեզ գրում են. «Օրվայ հարցերից մէկը կարելի է համարել այստեղի մի պալատութիւնը ու չը տեսնված ինքնագութիւնը: Դեռ չարաթիւնը ու ամառները տալի, երբ դիմում էին մասվաճառներին և ոչխարի միս խնդրում, սրանք կամ այժմ միս էին տալիս, կամ թէ պատասխանում էին, որ ձիւների պատճառով ճամբաները գոցվել են, էլ ոչխար չէ բերվում մորթելու համար: Այժմ միայն գեւադառներով տաւարի միսը խնդրում եւ վերջինը, բայց երբ սանում ես ասում չը գիտես ինչ կրակով եփես տաւարի անունով ծախված

—Ակուփ, քնի մատաղ, բայիս, նեղանալ մի, գիտալ մի, թէ ես քեզ հաւատում չեմ: Դոխտուրը եանի ասեց, թող լօբի, փիփրթ, սըխտորով վիշուկ ուտի ու քաղալ խմի. էլ ուրիշ բանի անում չի տուեց, ուրիշ բան չասեց բան:

—Ուրիշ բան որ ասած լինի, ես ինչ աս, միտ կերել եմ, որ տաղ անես, և աղաղակել խելի տղայ: Ես հօ երեխայ չեմ. իմ խելքն էլ աս բան կտրում: քանի-քանի դոխտուրներ եմ տեսել ու ճամբել, քանի-քանի դոխտուրներ իմ միջոցով հիւանդների ու հիւանդաւորների մասլախաթ եւ խորհուրդներ են տուել: Գլխիս մաղը էս զուլուղում և սպիտակել, հօսք քսան երեսուն տարի և ես գլխի. դոխտուրներից աւելի երեկել մարդկանց եմ ես զուլուղ արել, ես հիմի ամենալաւ դոխտուրից շատ բան եմ հասկանում: պրիստաւի, գեմամբերի, ինչընե-րի, արխիդոստուրի, սպիտուրի, գրեխտուրի զուլուղ եմ արել, սիւստիլի ու նաչալիլի զուլուղ եմ արել, տափի երանալին զուլուղ եմ արել, մէշաբէկին, մրօվի սուգին ու պրը-կուրօրին զուլուղ եմ արել, չուա գուրբերտաւորին ուրան էլ զուլուղ եմ արել: Հիմի հօ խելքս բան և կտրում, չէ,—հարցրեց նա վերջում մեծ հպարտութեամբ:

Աւագն ու միւս բոլոր անեցիները մնացին խորին անխառնութեամբ լուռ նայելիս իր կենսաբան աշխարհի երեկել ծառայութիւններ կատարած գլխին: Նա իրար ետեւից դատարկեց մի-երկու բաժակ էլ ու Մակի ապօրը շուտափոյթ առողջութիւն ցանկանալով դուրս գնաց տնից:

Հետեւալ օրը վաղ առաւօտեան Մակի ապօրը մեռաւ...

Ստ. Տէր-Աւետիքեան

Գանձակ



Электронпечатная Груз. Изд. Т-ва, В. Ванинская ул.